

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-539-31.03.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ ՀՀ կառավարություն Պատգամավոր՝ Աննա Կարապետյան	«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	Նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ (տես տեղեկանքը)	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Հեղինակ	Նախագիծը լրացնել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին նախագծով	Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 86-րդ հոդվածում՝ 1) 4-րդ մասում «նրա որոշումը ստանալուց հետո» բառերը փոխարինել «նրա որոշումն ուժի մեջ մտնելուց հետո» բառերով. 2) լրացնել նոր՝ 8-րդ մաս. «8. «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը	Ընդունվել է	Ընդունվել է

			կարող է ներկայացնել Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որը Կանոնակարգի 100-րդ և 101-րդ հոդվածներով սահմանված կարգով Ազգային ժողովի նիստում քննարկվում, ընդունվում է. 1) Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասով ընդունված որոշման դեպքում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, 2) Սահմանադրության 202-րդ հոդվածի 3-րդ մասով ընդունված որոշման դեպքում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:»: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:		
--	--	--	---	--	--

3	Հեղինակ	Նախագիծը լրացնել «Սահմանադրակա ն դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծով	Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի 72-րդ հոդվածում՝ 1) 3-րդ մասում «բայց ոչ ավելի, քան երեք ամսով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերը: 2) լրացնել նոր 3.1-ին մասով. «3.1. Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը գնահատվում է նախագծի՝ Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից, Սահմանադրական դատարան դիմումը մուտքագրելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում՝ առանց ժամկետը երկարաձգելու	Ընդունվել է	Ընդունվել է

			հնարավորության»: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:		
--	--	--	--	--	--